

1969-ի Տարեկան Տեղեկագիր Տիկնաց Միութեան

Ս. Գրիգոր ԼՈՒՍԱՆՈՐԻՀ Հայց.Եկեղեցւոյ

Շիրակօյի, ԻԼԼ.

Արժանապատիւ Տէր Հայր, Պատուարժան անդամներ ծխական Խորհուրդի եւ սիրելի անդամներ եկեղեցւոյս:

Ուրախ ենք ձեզ տեղեկացնելու որ եկեղեցւոյս Տիկնաց Միութիւնը յաջողութեամբ բոլորեց տարի մը եւս, հոգեւոր առաջնորդութեամբ մեր սիրելի Հովիւ, Արժ.Տ.Սարգիս Քհնյ.Գաշըզմեանի եւ մեր անդամուհիներուն անխոնջ եւ նուիրուած զործակցութեամբ:

Ունինք 47 տրատու անդամներ: 8-ը անդամական ժողովներ եւ 7-ը վարչական ժողովներ: Ներկաները ժողովներու ընթացքին միշտ եղած են մեծամասնութիւն եւ նախ քան ժողովի սկսիլը ունեցած ենք անդամական ճաշ: ժողովներէն վերջ Տէր Հայրը տասը վարկեան հոգեւոր կամ ազգային նիւթերու մասին ասուլիսի պահ ստեղծած եւ անդամուհիները տեղեակ պահած եւ հոգեհոր արթնութիւն եւ ազգասիրական զգացումներով զորացուցած է մեզ: Ժամանակին այցելութիւններ տրուած է վեր հիւանդներուն Յանձնախումբի կողմէ եւ ցաւակցական քարոզեր ղրկուած կամ այցելութիւններ տրուած մահերու պարագային:

Մահերու պարագային նաեւ տիկնաց Միութիւնս յանձն առած է հոգե-
ճաշերու պատրաստութիւնը ըստ սզաւոր ընտանիքին փափաքին:

Ունեցած ենք հետեւեալ շահաբեր ձեռնարկները:

Հակական ծնունդի առթիւ ճաշ, Պէյք Սէյլ, Մայրերու Օր, Եկեղեցւոյս անուանակոչութեան յիշատակութիւն եւ ճաշ, Տարեկան դաշտագնացութիւն, Անդամական Դաշտագնացութիւն, Տարեկան Տօնավաճար, Ամսական անդամական ճաշ, Բըմէյճ Սէյլ:

Տարեկան ընդհանուր մուտքը եղած է 1811.74 տոլար

„ „ „ Ելքը եղած է 1189.06 „ „

Ծխական Խորհուրդին փոխանցուած է 373.61 տոլար

Շինութեան ֆոնտին տուած ենք 560.00 „ „

Գունաւոր Ապակիի մը զնման համար 300.00 „ „

Նաեւ Պազարի ամբողջ հասոյթը 1472.89 Տոլար:

Կը յուսանք յաջորդ տարի, Աստուծոյ օգնութեամբ, մեր հովիւին իմաստուն առաջնորդութեամբ եւ մեր բարեպաշտ ու նուիրեալ անդամուհիներուն բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ, աւելի արդիւնաւոր տարի մը կ'ու-
նենանք:

Ի Դիմաց Տիկնաց Միութեան վարչութե